Ավարտական հետազոտական աշխատանք

Թեմա՝ Ուսումնական բանավեճերի կազմակերպումը «Մայրենի», «Հայոց լեզու», «Գրականություն» և «Հայ գրականություն» առարկաների դասերին

Կատարող՝ Հռիփսիմե Մուրադյան

Դպրոց՝ Հ.Ավետիսյանի անվան հ. 74 հիմնական դպրոց

Առարկա՝ Հայոց լեզու և գրականություն

Կազմակերպություն՝ «Երևանի Լեոյի անվան հ.65 ավագ դպրոց» ՊՈԱԿ

Խմբի պատասխանատու՝ Անահիտ Զոհրաբյան

Երևան 2022

Ուսումնական բանավեճերի կազմակերպումը «Մայրենի», «Հայոց լեզու», «Գրականություն» և «Հայ գրականություն» առարկաների դասերին

Ուսուցման ամենաարդյունավետ մեթոդներից մեկը բանավեճն է, որը թույլ է տալիս խթանելու սովորողների մոտիվացիան և քննադատական մտածողությունը: Այս մեթոդը մեծ հետաքրքրություն է առաջացնում սովորողների շրջանում: Սովորողները իրենք են ընտրում թեման, նախապես ուսումնասիրում այն, սովորում թեմային վերաբերող նոր բառեր և արտահայտություններ, կատարում թարգմանություններ, արտահայտում կարծիքներ թեմայի շուրջ: Ելնելով այդ քննարկումներից, կարծիքներից՝ սովորողները բաժանվում են թիմերի և ընտրում վարողներ: Ուսուցիչը, այստեղ կատարում է ուղղորդողի դերը:

Նպատակը.

Նման նախագիծեր վարելիս սովորողները ձեռք են բերում հետազոտական աշխատանք կատարելու հմտություններ, անձնական դիրքորոշում ունենալու և այն պնդելու, ինչպես նաև ուրիշի կարծիքը հարգելու հմտություն, հաղորդակցվելու, լեզվական հմտությունների, բանավոր խոսքի, քննարկումների, նոր բառապաշարի կարողությունների զարգացման հմտություններ:

Ընթացքը.

Ստեղծել հարմարավետ, ազատ միջավայր: Աթոռները դասավորել այնպես, որը թույլ կտա ուսանողներին տեսնել և խոսել միմյանց հետ: Հստակեցնել քննարկման կանոնները և նրանից սպասվող ակնկալիքները: Տրամադրել քննարկումն ուղղորդող հարցեր և հիմնական մտքեր: Յուրաքանչյուր քննարկում պետք է ունենա սկիզբ, ընթացք և ավարտ: Ցուցաբերել հարգանք բոլոր հնչած մեկնաբանությունների և հարցերի նկատմամբ: Բերել օրինակներ արդեն անցկացրած բանավեճերից ցույց տալով դրանց առավելություններն ու թերությունները:

Բանավեճ կարելի է կիրառել ցանկացած գիտության բնագավառում, ցանկացած մասնագիտության համար, ներգրավել 4-ից մինչեւ 20 ուսումնառուներ՝ կախված ընտրված ձևաչափից: Մեթոդը բավականին ճկուն է և հնարավորություն է տալիս բազմաթիվ ձևաչափերի օգնությամբ ոչ միայն ձևավորել խորը գիտելիք, այլև զարգացնել տարբեր հմտություններ և կարողություններ՝ ելնելով վերջինիս նպատակից ու խնդիրներից, բարձրացնել ուսումնառուների հետաքրքրությունը հետազոտության հանդեպ: Այսպես՝ Կարլ Պոպերի ձևավաչափը լավագույն տարբերակ է սկսնակ բանավիճողների համար, հնարավորություն է տալիս ընկալել բանավեճի բուն իմաստը եւ կառուցվածքը, աշխատել թիմում եւ գնահատել թիմային աշխատանքի կարևորությունը: Բրիտանական ձևաչափը, պահանջելով ուսումնառուներից բանավեճի որոշակի փորձ, նպաստում է արագ կողմնորոշվելու,

ստեղծագործական մտածելակերպ դրսևորելու, գաղափարները տեղում վերաձևակերպելու կարողությունների խորացմանը: Բանավիճելու կարողությունների զարգացման մեկ այլ տարբերակ է Համաշխարհային դպրոցական ձևաչափը: Ըստ էության՝ ձևաչափերը բավականին բազմազան են և հնարավորություն են տալիս կիրառել դրանք ինչպես իրենց դասական ձևով, այնպես էլ որոշակի փոփոխություններով, բացի այդ դասավանդողը կարող է մշակել ձևաչափի սեփական տարբերակը: Այսպիսով՝ ներկայացվող մեթոդն ունի լայն հնարավորություններ և կիրառման մի շարք առավելություններ: Բանավեճը զարգացնում է նաև քննադատական մտածողությունը տրամաբանորեն ճիշտ կառուցված և հիմնավորված փաստարկների ձևակերպման միջոցով: Փաստարկումների միջոցով բանավիճողը սովորում է բացահայտել հիմնախնդիրներ, կենտրոնանալ հիմնական, առավել կարևոր խնդիրների վրա, զանազանել գլխավորը երկրորդականից: Քննադատական մտածողությունը հնարավորություն է տալիս օգտագործել բոլոր թույլատրելի միջոցները հիմնախնդիրը բացահայտելու, դրա օգնությամբ լավագույն լուծումներ գտնելու, համատեղելի փաստերը անհամատեղելիներից տարբերակելու, հակասությունները բացահայտելու, գործողությունների, գաղափարների և համոզմունքների հետևանքները գնահատելու համար: Բանավեճը նպաստում է նաև լսելու կարողության զարգացմանը: Սովորաբար սկսնակ բանավիճողները անտեսում են ընդդիմախոսի ելույթը՝ կենտրոնանալով հիմնականում սեփական ճառի վրա: Սակայն ընթացքում հասկանում են, որ բանավեճում հաջողության հասնելու համար կարևոր է ուշադրությամբ լսել և վերլուծել ընդդիմախոսի ելույթը, բացահատել դրա ուժեղ և թույլ կողմերը, ներկայացված դատողություններում առկա հակասությունները: Ավագ դպրոցում գրականության դասերի ժամանակ հաճախ է լինում օգտվել մանկավարժական այնպիսի մեթոդից, ինչպիսին ուսումնական բանավեճն է:

Ուսումնական բանավեճը մտքերի, դրույթների, կարծիքների նպատակների որոշակիորեն կարգավորված փոխանակություն է՝ հանուն ճշմարտության որոնման: Բանավեճի միջոցով սովորողը հնարավորություն է ունենում ոչ միայն լայնությամբ ու խորությամբ քննել գրական ստեղծագործությունը, նաև այլ թեմաներ, այլև նոր գիտելիքներ ձեռք բերել, եզրահանգումներ անել, ամրապնդել իմացածը, խոսքի մշակույթը զարգացնել, ինչպես նաև զարգացնել իր մեջ սեփական կարծիքը պաշտպանելու կարողություն և այլն: Բանավեճի ժամանակ առաջ է քաշվում մեկ առանձին թեմա կամ հիմնահարց, և այն կառուցվում է որոշակիորեն սահմանված կարգով: Ավագ դպրոցի 10-րդ, 11-րդ դասարաններում ուսումնասիրվող ցանկացած հեղինակ կամ ստեղծագործություն, անկասկած, կարող է բանավեճի թեմա դառնալ՝ սկսած Մարկոս Ալիմյանի կտակից, վերջացրած Միսաք Մեծարենցով, որ ջարդերի ու կոտորածների ահեղ օրերին ‹‹արև ու գարուն էր երգում››: Մինչ հիմնահարցի ձևակերպումը կարող են լինել կինոֆիլմի դիտում, ձայնագրության ունկնդրում կամ նյութի ցուցադրում: Այստեղ արդեն շատ է կարևորվում մեդիայի դերը: Ընդ որում ՏՀՏ միջոցների գործածությունը կարող է ուղեկցել

բանավեճին, դառնալ իբրև փաստարկ, ապացույց կամ հիմնավորում առաջադրված մտքի համար և նոր եզրահանգումների աղբյուր: Այս հարցում, նպաստավոր է համագործակցությունը օրինակ ‹‹Տիգրան Հայրապետյան›› գրադարանի հետ: Այսպես՝ Շիրվանզադեի ստեղծագործությունն անցնելիս մենք արդեն մեր համակարգչի սեղանին ունեինք ‹‹Քաոս››, ‹‹Պատվի համար›› ֆիլմերը, Սիամանթոյի ստեղծագործությունը քննելիս նրա բանաստեղծություն-ների հայերեն և անգլերեն ասմունքը Սարգիս Նաջարյանի ընթերցմամբ, նաև Իսահակյանից, Թումանյանից, Չարենցից տեսանյութեր՝ կարելի է պատրաստել այս հեղինակներին ուսումնասիրելիս: Բանավեճը սկսելուց առաջ ուսուցիչը պետք է ստեղծի ուսումնական միջավայր և բարենպաստ հոգեբանական մթնոլորտ ապահովի, իսկ արդեն բանավեճի ընթացքում հետևի, որ այն վիճաբանության, լեզվակռվի չվերածվի, յուրաքանչյուր սովորող պետք է գիտենա, որ իր մասնակցությամբ բանավեճը պիտի հասցնի ակնկալված ավարտի՝ ճշմարտության բացահայտմանը: Սովորողները հաճախ չունեն իրար լսելու, զիջելու բարեկրթությունը, ուսուցիչներիս խնդիրն է դառնում նաև այս կարևոր հատկանիշները նրանց մեջ սերմանելու, դաստիարակելու գործը: Ընդ որում դրա լավագույն օրինակը հենց ուսուցիչն է ցուցադրում: Երբ արդեն բանավեճը սկսված է, փորձառու ուսուցիչը պիտի նախընտրի չմիջամտել կամ շատ քիչ միջամտել սովորողների միջև ծավալվող հարց ու պատասխանին, կարծիքների ձևակերպմանը:

Իհարկե, չպետք է մոռանալ, որ որքան էլ օրինակը պերճախոս լինի, այնուամենայնիվ սովորողին դրա համար ժամանակ է հարկավոր: Ուսուցիչը պիտի ստեղծի նաև անհրաժեշտ դադարներ՝ սովորողին մտածելու հնարավորություն ընձեռելու համար: Սակայն նա չի կարող մինչև վերջ դիտորդ մնալ: Հաճախ անհրաժեշտ է լինում ուսուցչի բացատրող հակիրճ խոսքը կամ մի փոքրիկ խթան՝ փակուղի մտած իրավիճակից դուրս գալու համար: Իսկ եթե սովորողը իր խոսքի մեջ թույլ է տալիս սխալ ձևակերպումներ, ոչ հայեցի արտահայտություններ,միտքը խճողվում է, ասելիքի անհստակություն կա, ուսուցչի միջամտությունը դառնում է անխուսափելի՝ պահպանելով մանկավարժական տակտը: Ընդհանրապես բանավեճի ժամանակ շատ մեծ է թեմայից շեղվելու հավանականությունը: Սովորողների կողմից միաժամանակ մի քանի հարցադրումների կամ տեսակետների առաջ քաշումը կարող է բերել ոչ ցանկալի արդյունքի, ուստի ուսուցչից պահանջվում է մեծ զգոնություն և կենտրոնացում բանավեճը մինչև վերջ, ցանկալի արդյունքին հասցնելու համար: Արդեն ասվեց, որ բանավեճը նպաստում է սովորողի մեջ նոր գիտելիքներ ձևավորելուն կամ խորացնելուն, կամ երևույթներին նոր հայացքով նայելու հնարավորություն է տալիս, սակայն երբեմն էլ սովորողը կարող է հանգել ոչ ճիշտ եզրահանգման և մնալ իր տեսակետին: Սա էլ, կարելի է

ասել, բնավեճի թերություններից մեկն է, որ կարող է ձևավորվել քննարկման արդյունքում: Դասի ավարտից առաջ ուսուցչի խնդիրն է նաև ամփոփել բանավեճի արդյունքները, գնահատել յուրաքանչյուր սովորողի մասնակցությունը, առանձնացնել այն կարևոր ձևակերպումները , որոնք կարող են ելակետային լինել հաջորդ թեմայի ուսումնասիրության համար:

Բանավեճը՝ իբրև մանակավարժական արդյունավետ միջոց, ավելի է կարևորվում այսօր՝ մեդիայի, համակարգչի տիրապետության այսպիսի պայմաններում: Ի՞նչու բանավեճ չեն այն բոլոր ձևակերպումները, կարծիքները, մտքերը ամենատարբեր հիմնահարցերի շուրջ, որ այսօր տեղ են գտնում մեր սոցիալական ցանցերում: Իսկ ահա ուսումնական բանավեճի լավագույն օրինակի այսօր կարելի է ականատես լինել սոցիալական ցանցերում: Դրանք այն կարևոր հարցադրումներն են, որոնք թ՛ե տնօրինության, թ՛ե ուսուցիչների և թ՛ե սովորողների կողմից դրվում են սոցցանցում՝ որոշակի ժամանակահատվածում անցկացնելու պայմանով և կարծիքների ձևով սեփական ասելիքը շարադրելով: Ասեմ ավելին, որ բանավոր ուսումնական բանավեճի համեմատությամբ այս ‹‹գրավոր բանավեճը›› ավելի արդյունավետ է և զերծ՝ վերը թվարկված թերություններից: Ուսուցչի զգոն լինելը կամ սովորողի՝ դիմացինին չընդհատելու, լսել կարողանալու անհրաժեշտությունը երկրորդ պլան են մղվում, իսկ ահա առաջին պլանում կարևորվում է աշակերտի՝ մայրենի լեզվի անսխալ իմացությունը, մտքերը գրագետ շարադրելու կարողությունը և այլն: Կարծում եմ, որ առցանց ուսումնական բանավեճերը ավելի արագ մուտք կգործեն մեր աշխատանքային գործընթացի մեջ՝ դառնալով կրթական գործի կազմակերպման ևս մի կարևոր բաղկացուցիչ մաս:

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԲԱՆԱՎԵՃԸ ՈՐՊԵՍ ՈՒՍՈՒՑՍԱՆ ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ՄԵԹՈԴԻ ԲԱՂԱԴՐԻՉ

Հասարակության ժողովրդավարականացումը, միջազգային կապերի ընդլայնումն ու արտասահմանյան երկրների հետ նոր որակական հարաբերությունները հանգեցնում են հանրակրթական և մասնագիտական կրթության բովանդակության, ուսուցման մեթոդների ու տեխնոլոգիաների անընդհատ կատարելագործման, միջազգային չափանիշներին համապատասխան մրցունակ մասնագետների պատրաստման անհրաժեշտության: Այս առումով ժամանակակից հասարակությունը դպրոցի և բարձրագույն մասնագիտական ուսումնական հաստատությունների առջև դնում է որոշակի պահանջների բավարարող շրջանավարտների պատրաստման խնդիր:

Նրանք պետք է՝

1. կարողանան կողմնորոշվել կյանքի փոփոխվող իրադրություններում, ինքնուրույն ձեռք բերել անհրաժեշտ գիտելիքներ և կիրառել դրանք գործնական տարբեր խնդիրների լուծման ժամանակ,
2. ունենան ստեղծագործական մտածողություն, կարողանան տեսնել ծագող խնդիրները, և օգտագործելով արդի տեխնոլոգիաները գտնեն դրանց լուծման ռացիոնալ ճանապարհները, լինեն նախաձեռնող ու նոր մտահաղացումների հեղինակ,
3. տիրապետեն տեղեկատվական հաղորդակցության մեթոդներին. կարողանան որոշակի հիմնախնդիրների լուծման նպատակով հավաքագրել անհրաժեշտ փաստեր, դրանք վերլուծել, կատարել անհրաժեշտ ընդհանրացումներ՝ համադրելով նմանատիպ և այլընտրանքային լուծումների տարբերակները, կատարեն հիմնավորված եզրակացություններ, օգտագործեն ձեռք բերված փորձը նոր խնդիրների առաջադրման և լուծման համար,
4. լինեն շփվող, կարողանան աշխատել թիմում, գտնեն ելք ցանկացած կոնֆլիկտային իրավիճակից դուրս գալու համար, ինքնուրույն աշխատեն սեփական մտավոր, մասնագիտական, մշակութային, բարոյական մակարդակի զարգացման ուղղությամբ:

Այս բոլոր հիմախնդիրները, ի տարբերություն ավանդական ուսուցման, կարելի է իրականացնել միայն սովորողի ուսումնական ակտիվ գործունեության պայմաններում, դասավանդողի կողմից ուսուցման ինտերակտիվ մեթոդների կիրառման միջոցով՝ օգտագործելով համագործակցային եղանակը: Ինտերակտիվ ուսուցման ժամանակ ուսուցման գործընթացի բոլոր մասնակիցները գործնականորեն ընդգրկվում են ակտիվ ճանաչողական գործընթացում: Ուսուցման ինտերակտիվ մեթոդները թույլ են տալիս ուսումնառողի համար անընդհատ նորացվող դաստիարակչական և ուսումնական իրադրությունների այնպիսի պայմաններ ստեղծել, որտեղ իրականանում է նրա անձի ամբողջական ներգրավվումը գործունեության և փոխադարձ շփման գործընթացին, որը ակտիվացնում է նրա ներքին կարողությունները՝ դրանով իսկ նպաստելով ներքին հասունացմանը: Ուսուցման ակտիվ մեթոդների թվին է պատկանում ուսումնական բանավեճը: Ուսուցման գործընթացում բանավեճի հիմնական խնդիրը ճանաչողական հետաքրքրության խթանումն է, ուսումնառողների ներգրավումն այս կամ այն հիմնախնդրի վերաբերյալ տարբեր գիտական տեսակետ ների ակտիվ քննարկման մեջ, և դրդապատճառը՝ հասկանալու սեփական և ուրիշի դիրքորոշումների հիմնավորման տարբեր մոտեցումները: Ուսումնական բանավեճի արդյունավետ կիրառման հիմնախնդրի լուծումը հնարավոր չէ պատկերացնել առանց երկխոսության փոխազդեցության՝ որպես ուսումնադաստիարակչական նըպատակի, հայեցակարգի դիտարկման: Երկխոսություն ասելով, հասկանում ենք հաղորդակցական որոշակի մի միջավայր, որը ծառայում է որպես մեխանիզմ անհատի ձևավորման, ինքնազարգացման և ինքնիրացման համար՝ մշակույթների բազմազանության պայմաններում: Ինչպես ասել է Մ. Մ. Բախտինը. «ճշմարտութունը չի ծնվում և չի գտնվում առանձին վերցրած մի մարդու մտքում, այն ծնվում է միասին ճշմարտություն որոնող մարդկանց մոտ՝ երկխոսության ընթացքում»: Մ. Մ. Բախտինի, Բ. Խ. Բիբլերի փիլիսոփայական եզրակացությունների վրա է հիմնվում իր ուսումնասիրություններում «մըշակույթների երկխոսության դպրոցի» ստեղծող՝ Ս. Յու. Կուրգանովը: Սովորաբար բանավեճ ասելով հասկանում ենք մտքերի փոխանակման բոլոր հնարավոր ձևերը: Ուսումնական բանավեճը ուսումնառողների տրամախոսական փոխազդեցության ձևավորման հիմնական միջոցն է, որի ժամանակ, սովորողների համեմատաբար փոքր խմբերում, անց է կացվում որոշակի թեմայով խմբային բանավեճ: Բանավեճը, որպես խմբային քննարկում՝ կախված ուսումնասիրվող օբեկտից, երևույթից, հիմնախնդրի մակարդակից, կատարված դատողություններից, կարող է լինել տարբեր բնույթի: Մանկավարժական գրականության մեջ բանավեճի մեթոդները չեն դասակարգվում ըստ գործունեության բաղադրիչների (սուբյեկտի, օբյեկտի, միջոցների, նպատակների, գործողությունների, պահանջների, պայմանների, արդյունքների): Գործնականում այն ունիվերսալ մեթոդների համախումբ է, որը կարելի է հաջողությամբ կիրառել տարբեր բնագավառներում, օրինակ՝ բնագիտական, հումանիտար, ճշգրիտ գիտությունների դասավանդման գործընթացներում: Բանավեճի անցկացման համար անհրաժեշտ է ուսումնառողների հանգամանալից նախնական պատրաստվածություն՝ ինչպես բովանդակային, այնպես էլ կանոնակարգային իմաստով, և քննարկվող խնդրի

առնվազն երկու հակադիր տեսակետների առկայություն: Ուսումնական բանավեճը բանավեճերի մյուս ձևերից տարբերվում է նրանով, որ նրա հիմնախնդիրը նորություն է միայն բանավեճի մասնակիցների համար, այսինքն՝ հիմնախնդիրը, որը գիտության մեջ արդեն իր լուծումը ունի, պետք է լուսաբանվի լսարանում, ուսուցման ընթացքում: Ուսումնական բանավեճը անցկացնողի համար բանավեճի արդյունքները, որպես կանոն, նախապես նախագծված են: Բանավեճի նպատակը որոնումների գործընթացն է, որը պետք է բերի օբյեկտիվորեն հայտնի, (սովորողների տեսանկյունից) սուբյեկտիվորեն՝ անհայտ նոր գիտելիքների: Ընդ որում, այդ որոնումը օրինաչափորեն պետք է հանգեցնի դասավանդողի կողմից նախատեսված առաջադրանքին և նախագծված արդյունքին: Իսկ դա, մեր կարծիքով, հնարավոր է, երբ հիմնախնդրի լուծման որոնումները (խմբային բանավեճ) ամբողջությամբ վերահսկվում և ուղղորդվում են դասավանդողի կողմից: Բանավեճի անցկացման համար մանկավարժը ստեղծում և պահպանում է սովորողների փոխհարաբերությունների որոշակի մակարդակ՝ բարյացակամ և անկեղծ փոխհարաբերություններ: Դասավանդողը ուսումնառողներին պետք է ցուցադրի իր լիակատար վստահությունը, օգնի նրանց նպատակների և խնդրների ձևավորման ու ճշրտման հարցերում, առաջնորդվի խաղընկերոջը չգնահատելու միտումով՝ վերաբերվելով նրան որպես իրեն հավասարի՝ սեփական կարծիք ունենալու իրավունքով: Մանկավարժը պետք է վերահսկի ճշմարտության որոնման ողջ գործընթացը, ապահովի սովորողների ճշմարտացի մտահանգումները և եզրահանգումները, ինչը նրանից պահանջում է դիտարկվող հիմնախնդրի իմացության բարձր մակարդակ, որը որպես կանոն, ձևավորվում է նմանատիպ խնդիրների լուծման բավականաչափ աշխատանքային փորձի պայմաններում: Լավագույն ձևով նախագծված, կազմակերպված և իրականացված բանավեճի համար մանկավարժ-կազմակերպիչը պետք է ունենա նաև լուրջ մեթոդական պատրաստվածություն, տիպիկ իրադրությունների լուծումների նախագծման բարձր մակարդակ, ինչպես նաև ոչ ստանդարտ իրավիճակներում, հանպատրաստից լուծումներ գտնելու անհրաժեշտ որակ, միաժամանակ, նաև ուսանողներին այլ լուծումներ որոնելու ուղղորդման բավականաչափ բարձր կարողություն: Այսպիսով, ուսումնական բանավեճը կարելի է դիտարկել որպես ուսումնական գործունեության սուբյեկտներ հանդիսացող՝ դասավանդողի և ուսումնառողի, փոխհարաբերությունների և փոխգործողությունների ընթացքում, գիտելիքների յուրացման, կարողությունների ու հմտությունների ձևավորման ինտերակտիվ մեթոդ: Այս մեթոդի էությունը կայանում է նրանում, որ ի տարբերություն ավանդական մեթոդների, ուսումնական նյութի յուրացումը ապահովվում է ոչ միայն ընկալման, հիշողության, ուշադրության միջոցով, այլ նաև մտքի լարման, սխալ մտածելակերպի հաղթահարման, տարբեր տեսակետների համադրման և ճշմարտության որոնման ճանապարհով: Մեթոդը թույլ է տալիս առավելագույն չափով օգտագործել ունկնդիրների փորձը, դրանով իսկ, օժանդակելով ուսումնասիրվող նյութի յուրացմանը: Դա պայմանավորված է նրանով, որ խմբային բանավեճի ժամանակ ոչ թե դասավանդողն է ուսուցանվողներին մատուցում ճշմարիտը, այլ իրենք ուսուցանվողները՝ հիմնվելով սեփական փորձի վրա, հանգում են տվյալ խնդրի լուծմանը, գտնում ապացույցները, առաջադրված սկզբունքները և

հիմնավորումները: Այդ ամենը նպաստում է ստեղծագործական և վերլուծական մտածողության զարգացմանը, ապագա մասնագետի նախապատրաստմանը, նպատակամղմանը՝ ինքնուրույն հետազոտական աշխատանքի: Ուսումնառողները սովորում են հաղորդակցվել, համագործակցել միմյանց և ուրիշների հետ, մտածել քննադատորեն, պարզ ու հստակ ձևավորել իրենց մտքերը, կառուցել փաստարկված ապացույցների համակարգը, վիճել և ապացուցել իրենց իրավացիությունը: Ուսումնական խմբային բանավեճերը մեր կարծիքով առավելապես արդյունավետ են ֆիզիկամաթեմատիկական առարկաների բարդ նյութի ուսուցման, մշակման և անհրաժեշտ դրույթների ձևակերպման, նյութի ամրապընդման, պրակտիկ կարողությունների ձեվավորման ժամանակ: Հարկ է նշել, որ բանավեճի մեթոդը նպատակահարմար է նաև թիմային աշխատանքի զարգացման համար: Թիմային աշխատանքի կատարումը բանավեճի հաջորդ կարեւոր առանձնահատկությունն է: Բանավիճողները սովորում են համատեղ աշխատել, միմյանց հետ քննարկել, մեկը մյուսին լսել եւ մշակել փոխահամաձայնեցված դիրքորոշումներ: Մայրենիի հայոց լեզվի և գրականության դասերին այս մեթոդի կիրառումը առավել արդյունավետ, քանի որ այն կարելի է ասել խոսքային մեթոդ է և այս առարկաների դեպքում այն ավելի կիրառելի է այսպես օրինկ բերենք մայրենիի դասերին տեսական կամ ստեղծագործական նյութ անցնելիս բանավեճի մեթոդի կիրառումը արդյունավետ է նյութի յուրացման տեսակետից, լեզվի ժամերին արդեն բարձր դասարաններում լեզվական, քերականական նյութի բանավեճային քննարկում առավել կարևոր դեր է խաղում նյութի ճիշտ ընկալման տեսակետից դե իսկ գրականության ժամերի համար սա ընդհանրապես կարևոր է և արդյունավետ, գրական կերպարների քննման բացահայտման կերպարի գաղափարների յուրացման տեսակետից բանավեճի մեթոդի կիրառումը դարձնում է դասընթացը ավելի հետաքրքիր և արդյունավետ: Բանավեճի իմաստն ու կարեւորությունը ուսումնառողների մոտ միանգամից չի ձեւավորվում, դրա ընկալումն առաջ է գալիս բանավիճելու որոշակի փորձ ձեռք բերելուց հետո: Այդ իսկ պատճառով մեթոդի մեկանգամյա կիրառումը չի կարող հանգեցնել հաջողության, անհրաժեշտ է այն դարձնել դասավանդման մշակույթի անբաժանելի մաս: Բանավեճի գնահատման համար մշակվում է հատուկ ձեւաչափ, որտեղ գնահատողը նշումներ է անում յուրաքանչյուր բանախոսի ելույթի, այն է՝ ներկայացված փաստարկների, դրանց հիմնավորումների, հնչեցրած հարցերի եւ պատասխանների վերաբերյալ: Բանավեճի ավարտին «դատավորները» (գնահատողները), առանց որեւէ քննադատության, տալիս են իրենց մեկնաբանությունները ելույթների վերաբերյալ: Ըստ էության բանավեճի մեթոդի կիրառման ընթացքում գնահատումը կատարում է երեք կարեւոր գործառույթ: Ամենից առաջ գնահատումն անհրաժեշտ է, որպեսզի ուսումնառողները ձգտեն սովորելու : Այնուհետեւ դասավանդողը գնահատում է այն ամենը, ինչ սովորել եւ կատարել է ուսումնառուն: Վերջապես, գնահատումը օգնում է սովորել:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Այսպիսով ուսումնասիրելով բանավեճի մեթոդը հանգում ենք հետևյալ եզրակացություններին.

1. Բանավեճի մեթոդի կիրառումը առավել արդյունավետ է դարձնում նյութի յուրացումը,
2. Բանավեճը խոսքային մեթոդ է,ինչն առավել կարևոր և արդյունավետ է հենց հումանիտար, խոսքային դրսևորում ունեցող առարկաների՝ մայրենիի, հայոց լեզվի և գրականության դասերը
3. Բանավեճի մեթոդի կիրառումը կարևոր է աշակերտների անհատական զարգացման համար և այն նպաստում է խոսքի զարգացմանը և ինքնադրսևորմանը: